նութեան ներքոյ մինչև 55,700 ռուբլի։ Եւ որովհետև այդ գումարդ ամփոփուած է երկու Թագաւորական անընդհատ արդիւնք բերող տոմսակների մէջ՝ 49,600 ռուբլի արժողութեամբ, որք տալիս են ի տարին արդիւնք 4 տոկոսիք, և միայն գումարիս մնացեալ մասնի համար ստացւում է 5 և 6 տոկոսիք, ուստի և Աղքատանոցն ունի նորանից տարեկան արդիւնք իբրև 2,300 ռուբլի, որպիսի գումարդ յոյժ սակաւ է՝ եթէ ի միտ առնուի՝ 1) թէ խնամարկուողաց և նոյա ծառաների պահպանութիւնն, որպէս և Աղքատանոցիս ջեռուցման և լուսաւորութեան, ևս և նորա շինուածոյն նորոգութեան ծախքն՝ նստում են համարեա թէ 1,975 ռուբլի, 2) թէ Աղքատանոցիս Խորհրդարանն տալիս է ծերացեալ աղքատ ազգակցաց, Աղքատանոցէն դուրս բնակողաց, ամսական և ժամանակաւոր օգնութիւն, և ըստ կարողութեանն՝ վճարում է աղքատ ծնողաց զաւակների կրթութեան համար, որոյ վասն ի գործ է դրւում մինչև 900 ռուբլի. իսկ տարեկան ծախքն ընդամենն հասանում է 2,875 ռուբլի, այնէ՝ 586 ռուբլի աւելի քան զմուտքը։ Աւելորդ ծախս եղած գումարն լցուցւում է՝ նոյնպէս և յայլ համազգիներից, որք գտանւում են Մոսկուայում։

Բայց Աղքատանոցիս Խորհրդարանն՝ չնայելով իւր բոլոր աշխատանացն՝ իւր արդեանց սակաւութեան պատճառաւ՝ չէ կարողանում ըստ արժանւոյն շատացուցանել բարեգործութեան բոլոր պահանջմունքն. Մոսկուայում՝ կան շատ աղքատ անձինք ի Հայոց, որք կարօտ են օգնութեան. նմանապէս կան և զաւակք աղքատ ազգակից ծնողաց՝ որք փափաքում են գիտութեան, և որոց կարելի է բանալ ճանապարհ, տեղաւորելով զնոսա ուսումնարանի մէջ։

Այս դիտաւորութեամբ Գասպարեան Աղքատանոցի Խորհրդարանն՝ աւելորդ չէ համարում ծանօթացնել զիւր հայրենակիցքը սոյն այս բարեգործ հիմնարկութեան, նորա միջոցների և կարեաց հետ, և յոյս ունի՝ որ պատուելի ազգակիցքն համակրութիւն ցոյց տան այս բարի գործոյս և չհրաժարուեն ձեռնտու լինել նմա՝ ըստ չափու կարողութեան իւրեանց՝ օգնականութեան այսպիսի բարի և կարևոր գործում՝ բաղում՝ որք և չքաւոր մեր եղբարք։ Իսկ իւրաքանչիւր նուիրաբերութիւն կընդունուի մեծաւ շնորհակալութեամբ և նուիրատուաց անուններն՝ կդրոշմուին նուիրատուութեանց մատենին մէջ։

Նախագահ Անդամ Յովհաննէս Յովնանեանց.

Անդամք { Միքայէլ Ստեփանեանց
Մելքոն Փանեանց.

Անփոփոխ Անդամք Գէորգ Լիանոզեան

Հոգեւորական անձն, Յարութիւն Աւագ Քահանայ Կեօքչեանց։

---

ՀԱՂԻԻ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԱՑ Ղ. Ի. ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿ ԱՐՂՈՒԹԵԱՆՑ ՀՈԳԵՒՈՐ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ ՀԱՅՈՑ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՕԼՈՅ.

---

## Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Հոգաբարձութիւնս Օրիորդական Հոգևոր դըպրոցի յաւերժայիշատակ Դահրաման Իշխանի Երկայնաբազուկ-Արղութեանց մուտ գործելով պաշտօնավարութեան համաձայն հաստատութեան Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց Տեառն և Տեառն Գէորգայ Չորրորդի Հայրապետական Կոնդակաւ ի 18ն Մարտի տարւոյս համարաւ 94 ստացաւ ի նախկին հոգաբարձուաց զամենայն ի ձեռս նոյա գտանեցեալ դդրամական հաշիւս և զայլ պատկանաւորութիւնս վերաբերեալս այդմիկ պաշտաման, նոյնպէս և զերկուս համառօտ հաշուեցուցակս մուից և ծախուց դպրոցին յօրէ բացման մինչ ցսկիզբն ներկայ տարւոյս, պարտաւորութիւն համարէ ինքեան զվաւերական պատճէնս երկուց ցուցակացն ևս առաքել ի Խմբագրութիւնդ Արարատայ և խնդրել հրատարակել յէջս պատուական ամսագրոյդ ի լուր ազգայնոց, որպէս զի այդ պարտիք հոգաբարձութեանս յետաձգեալն ցարդ ըստ ինչ ինչ յարգելի պատճառաց կատարեսցի ի կողմանէ հոգաբարձութեանս

և մի՛ զանցառու գտցուք ի կատարման բառական մտաց Հաստատեալ կանոնադրութեան.

Նախագահ Հոգաբարձութեան Սուքիաս Վարդապետ Պարզեանց

Հոգաբարձուք Յովսէփ Աւագ Քահանայ Կոստանեանց

Ռուբէն Մելիք—Ազամեան

Արամ Մատակեանց

Սարգիս Միրզայեանց

Համար 40.

Ի 27 Ապրիլի 1874 ամի

Յալէքսանդրապօլ:

(Ցուցակ մտից Օրիորդական Հոգևոր Դպրոցի Հայոց Ալեքսանդրապօլու քաղաքի յանուն Ղահրաման Իշխանի Երկայնաբազուկ Արղութեանց, բացելոյ յորմէ բացման դպրոցի ի 1870 ամէ ց1-ն Յունվարի ներկայ 1874 ամի:)

### ՄՈՒՏՔ.

| | | |
|---|---|---|
| Տոկոսադրամք առացեալք ի քսանեւվեց հազար րուբլի կտակաւանդեալ մայր գումարաց Ղահրաման Իշխանի թէ ի Գանձարանէ յարքունուստ և թէ յարտաքին շահեցուցմանէ, նոյնպէս և նուիրեալն ի բարեպաշտ կտակակատարաց, ամենն | 3440 | |
| Տոկոսադրամք առացեալք ի Սարիբէկէ Բունիաթեանց ի Սահակայ և ի Սիմէօնէ Նիկողայոսեան Խահակեանց յընթացս երից ամաց, ամենն | 600 | |
| Թոշակադրամ ի ծնողաց աշակերտուհեաց վասն 1871. 1872 և 1873 ամաց, ամենն | 3394 | |
| Նուէր ի Բարեգործուհի Անդամոց Օրիորդական դպրոցի յընթացս նոյնպէս երից ամաց | 293 | |
| Արդիւնք վիճակախաղութեան գոյացեալք յերկուս նուագս յընթացս 1872 և 1873 ամաց, ամենն, | 307 | |
| Ընծայատուութիւն զանազան անձանց ուսումնասիրաց յօգուտ Օրիորդական դպրոցին | 320 | |
| Գին վաճառեալ գրեանց | 29 | 32 |
| Վարձ ուսումնարանական կիսաբաժին սենեկաց ի պրիստաւ Բագրատոյիէ | 120 | |
| Ընդամենն | 10902 | |

### ԾԱԽՔ.

| | | |
|---|---|---|
| Ի պէտս սկզբնական և երկրորդական հոգացողութեան առացման կտակաւանդեալ քառասուն հազար րուբլի դրամոց և վիճելի գործոյն ժառանգաց ըստ մասին ըստ այսմիկ թէ աստ յԱլեքսանդրապօլ քաղաքի, թէ նրկիցս ի Տփխիս քաղաքի և թէ ի Սանկտպետերբուրգ մայրաքաղաքին, ընդամենն | 1613 | 10 |
| Ի վճար շինելոյ ժամանակ առ ժամանակ և գնելոյ զգրասեղանս ուսուցչաց, և աշակերտուհեաց, զնստարանս, զպահարանս, զգրատախտակս, զաթոռս, զարկեղս եւն. | 336 | 20 |
| Ի վարձ տան ուսումնարանի զանազան անձանց | 632 | 87 |
| Ի գին վառելափայտից ընդամենն | 244 | 23 |
| Ի ռոճիկ ուսուցչաց, ուսուցչուհեաց և պահապանաց դպրոցին, ի վարձատրութիւն նոցին, ի վարձ բնակարանի և յայլ վերաբերեալ նոցին հոգացողութիւնս, ընդամենն | 3924 | 71 |
| Ի գին մատենից վասն օրինասահման կարգաւ ժապաւինելոյ ամենն | 4 | 90 |
| Ի պէտս որդեգրուհեաց, թէ ի գին հանդերձեղինաց նոցին ոտնամանից և այլ պարագայից, և թէ ուսումնական պիտոյից գրեանց, մատիտից, գրչահատից եւլն. | 638 | 23 |
| Ի գին պարագայից ձեռագործութեան թէ որդեգրուհեաց և թէ ընդհանուր աշակերտուհեաց, ամենն | 420 | 61 |
| Ծախք գործադրեալք ի ժամանակս հանդիսակատարութեանց ի տարեդարձս և ի պահս հարցաքննութեանց և ի կատարելն դհոգեհանգստեան կարգ հանգուցեալ կտակարարի, ամենն | 26 | 32 |

| | | |
|---|---|---|
| Ի գին եւ ի վարձ բերել տալոյ ի մայրաքաղաքէն զ՚արկաւոր գրեանս եւ զայլ ուսումնական պարագայս յանուն Օրիորդական դպրոցի եւ մասամբ հոգեւոր վիճակային դպրոցի տղայոց քաղաքիս . . . . . | 474 | 31 |
| Ի գին երկու հատ կարի մեքենայի, որք գնեցան յԱխալցխացի պարոն Աւետիքէ, ամենն . . . | 170 | |
| Ի վարձ կանդուխտօրի վասն երկիցս նկարելոյ զձեւակերպութիւն շինութեան օրիորդական դպրոցի . . . | 76 | |
| Ի մասին զանազան կարկատանաց եւ հոգացողութեանց ուսումնարանական սենեկաց եւ արտաքնոցաց եւ այլ մաքրութեանց եւ բարեկարգութեանց նոցին | 487 | 5 |
| Ամենն : | 8809 | 27 |

~~~~~~~~~~

## ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ.

(Շարունակութիւն.)

### Ի ՎԻՃԱԿԻՆ ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՈՅ.

| | | |
|---|---|---|
| Հասարակութիւն Բայինտուր գեղջ . | 10 | |
| Նոյն գիւղացի Մանուկ Ղազարեան . | 1 | |
| Հասարակութիւն Գաճարլի գեղջ . | 15 | |
| Նոյն գիւղացի Խաչատուր Աստուածատրեան . . | | 50 |
| ,, Թադէոս Պետրոսեան . . | | 50 |
| ,, Թադէոս Գէորգեան . . | | 50 |
| ,, Յովհաննէս Թադէոսեան . | 1 | |
| ,, Գալուստի մայր Սէրան . . | | 50 |
| ,, Թորոս Յովհաննէսեան . . | | 50 |
| ,, Յարութիւն Յովհաննէսեան . | | 50 |
| ,, Սարգիս Պապանեան . . | | 40 |
| ,, Ստեփան Գրիգորեան . . | | 25 |
| ,, Փիլիպպոս Մարտիրոսեան . | | 50 |
| ,, Անտիկ Տէր Թովմասեան . | | 50 |
| ,, Լուլօ Վիրապեան . . | | 25 |
| ,, Յովհաննէս Պետրոսեան . | | 25 |
| ,, Կարապետ Հայրումեան . | | 25 |
| Բայինտուրցի Յարութիւն Յովհաննէսեան | | 25 |
| ,, Վարդան Մանուկեան . . | | 50 |
| ,, Մնացական Յովսէփեան . | | 25 |
| ,, Սարգիս Զախալեան . . | | 25 |
| ,, Յարութիւն Յովհաննէսեան . | | 40 |
| ,, Ղազար Սարգսեան . . | | 40 |
| ,, Վարդեան Սարգսեան. . | | 40 |
| ,, Յարութիւն Ամիրխանեան . | | 50 |
| ,, Պօղոս Պետրոսեան . . | | 25 |
| ,, Գալուստ Գալստեան . . | | 50 |
| ,, Գառօյ Մովսէսեան . . | | 40 |
| ,, Դաւիթ Վարդանեան . . | | 50 |
| ,, Մարտիրոս Յովհաննէսեան . | | 50 |
| ,, Մխիթար Պօղոսեան . . | | 50 |
| ,, Հայրապետ Կարապետեան . | | 30 |
| ,, Ղարաքաղցի ոմն . . | | 20 |
| ,, Գրիգորի կին Սալուին . . | | 20 |
| ,, Մատթէոսի կին Թագուհի . | | 20 |
| ,, Գէորգի կին Խանօ . . | | 20 |
| ,, Աղուզումցոց Մալաք . . | | 50 |
| ,, Սինաղար . . . | | 50 |
| ,, Թորոս Փանօյեան . . | | 20 |
| ,, Տէր Թումասենց Զմրուխտ . | | 20 |
| ,, Փիլիպպոսի կին Սալվի . . | | 20 |
| ,, Խաչատուրի կին Զանան . | | 20 |
| ,, Փանօյենց Մարտիրոսի կինն . | | 10 |
| ,, Դալլաքի մայրն . . | | 10 |
| ,, Վանցունց Հոփփոփմէ . . | | 20 |
| ,, Տիտենենց Թադէոսի կին . | | 20 |
| ,, Իւզբաշի Սահակի կին . | | 25 |
| ,, Յարութիւնի կին Մարգարիտ . | | 20 |
| ,, Խլենց Նմար . . . | | 20 |
| ,, Մկրտչի կին . . . | | 10 |
| ,, Խաչիլենց Մագդաղ . . | | 20 |
| ,, Սարիբէկ Թադէոսեան . | | 20 |
| Հասարակութիւն Աղ-բուլաղ գեղջ . | 8 | |
| Նոյն գիւղացի Մկրտիչ քահանայ Տէր Մկրտչեան . . | 1 | |
| ,, Կարապետ քահանայ Տէր Մէքայէլեան . . | 1 | |
| ,, Գրիգոր Սարգսեան . . | | 20 |
| ,, Պետրոս Եայլըյեան . . | | 20 |
| ,, Գալուստ Ճաճապաղեան . . | | 20 |
~~~~~~~~~~